

(արձ. թիվ) ամբիոնի վարիչ՝

.....

(ստորագրություն)

29. 08. 2019

(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՀՀ ոստ. կրթահամալիրի քոլեջ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ոստիկանության սպա
ԱՄԲԻՈՆ	Լեզուների ամբիոն
<ul style="list-style-type: none">▪ մասնաշենք/սենյակ▪ հեռախոս▪ էլ հասցե▪ Web կայքի հասցե	lezuneriambion@mail.ru
ՀԵՂԵՆԱԿ/ՆԵՐ	Ոստ. գնդապետ, դոցենտ Ռ.Մուսաեյան
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	2019-2020 ուստարվա

ԿՐԵԴԻՏՆԵՐ	
ԴԱՍԱԺԱՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ	Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 92 ժամ, որից 44 գործնական պարապմունքներ նախատեսվում է 1-ին կիսամյակում, 48 գործնական պարապմունքներ՝ 2-րդ կիսամյակում: Դասընթացն ավարտվում է քննությամբ:
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ	Դպրոցական մակարդակ
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	<p>Դասընթացի բովանդակությունը ներկայացված է հետևյալ բաժիններով՝</p> <ul style="list-style-type: none"> • Լեզվի հասարակական դերը, տարբերակները, գործառույթը: • Խոսքի ընդհանուր հատկանիշները: Խոսքի մշակույթ առարկան, խնդիրները և նպատակները: • Ոճ. ոճերի դասակարգումը և տիպերը: Գործառական ոճեր, տեսակները: • Տարբեր մակարդակների լեզվական իրողությունների ոճական արժեքը /հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական/: • Հնչյունական ոճաբանություն. հնչյունների ոճական արժեքը • Բառային ոճաբանություն: Բառապաշարի ոճաբանական դասակարգումը/ ժողովրդախոսակցական, բարբառային ու ժարգոնային բառեր, հնաբանություններ, նորաբանություններ, օտարաբանություններ/: • Քերականական ոճաբանություն: Ձևաբանական կարգերի ոճական հնարավորությունները: • Շարահյուսության ոճական հնարավորությունները:
ՆՊԱՏԱԿ	<p>Դասընթացի նպատակն է՝</p> <p>Խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում, ընդհանուր լեզվական կարողությունների մշակում, իրավական լեզվամտածողության ձևավորում:</p> <p>Ճիշտ, տրամաբանված մասնագիտական խոսք կառուցելու կարողության ձևավորում:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • Իրավապահ մարմինների ապագա աշխատակցի կողմից լեզվական հենքային գիտելիքների յուրացումը: • Հմտությունների ու կարողությունների զարգացումը՝ ստացած լեզվական գիտելիքների մասնագիտական խնդիրների լուծման

<p>ԽՆԴԻՐ/ՆԵՐ</p>	<p>գործում կիրառելու համար:</p> <ul style="list-style-type: none"> • Լեզվամշակութային կոմպետենցիայի ձևավորումը տարբեր սոցիալ-մշակութային հանրությունների հետ խոսքային /գրավոր թե քանավոր/ գործունեություն ծավալման նպատակով:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵՎՔԱՅԻՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐ</p> <p>1. Իմանա</p> <p>2. Կարողնա</p> <p>3. Տիրապետի</p>	<p>Սովորողները պետք է իմանան`</p> <ul style="list-style-type: none"> • լեզվական և ոճական հիմնական կարգերը, հասկացությունների բովանդակությունը, ոճերի տեսակները, լեզվական միավորների կիրառական առանձնահատկություններն ու ոճարտահայտչական հնարավորությունները <p>Սովորողները պետք է կարողանան`</p> <ul style="list-style-type: none"> • կատարել ոճական վերլուծություն, տարբերել գործառական ոճերն ըստ իրենց բնորոշ հատկությունների, գնահատել, համեմատել ու համադրել դրանք, տարբերել հայերենի բառապաշարի ոճական շերտերը, ձևաբանական ու շարահյուսական իրողությունների ոճական նրբերանգը, պատկերավորման և արտահայտչական միջոցների ձևավորման յուրահատկությունները և դրանց ճիշտ գործածությամբ կառուցել գրավոր և քանավոր խոսք: <p>Սովորողները պետք է տիրապետեն`</p> <ul style="list-style-type: none"> • լեզվական և ոճագիտական հիմնական կարգերին, յուրաքանչյուր ոճի ու հատկապես պաշտոնական ոճի բառային և քերականական համակարգին, վարչագործարարական խոսք կառուցելու/հիմնականում գործնական գրություններ/ ոճական հմտություններին:

--	--	--

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		<p>1. Դասախոսությունների փաթեթ</p> <p>2. Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե. 2003:</p> <p>3. Յու. Ավետիսյան, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Ե. 2016:</p> <p>4. Զ. Աղաջանյան, Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների գործնական աշխատանքների ձեռնարկ, Ե. 2009:</p> <p>5. Լ. Եզեկյան, Ոճագիտական ուղեցույց, 2007:</p> <p>6. Յ. Ավետիսյան, Արդի հայերենի կետադրության հիմնախնդիրներ, Ե. 2019</p>
Հիմնական		
Լրացուցիչ		<p>1. Թ. Շահվերդյան, Ոճագիտություն, Ե, 1982:</p> <p>2. Ա. Մարության, Հայոց լեզվի ոճաբանության գործնական աշխատանքների ձեռնարկ:</p> <p>3. Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, 1994:</p> <p>4. Ս. Էլոյան, Հայոց լեզվի բառային ոճաբանություն, Ե.:</p> <p>5. Հ. Գալստյան, Ճիշտը և սխալը, Ե., 2007:</p> <p>6. Զ. Գյուլամիրյան, Խոսքի զարգացում, Ե., 2004:</p> <p>7. Ռ. Մուսայելյան, Հայոց լեզու, Ե., 2013:</p>

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՆԴՂԱԿ	Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
	9-10	Գերազանց
	7-8	Լավ
	4-6	Բավարար
	0-3	Անբավարար
	0	Չներկայացած/չի ներկայացրել
	Ստուգարքային գնահատում	Ստուգված/չստուգված
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	<p>Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ուսանողի ողջ տարվա ընթացքում կատարած աշխատանքների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է համապատասխան ներքոհիշյալ բաղադրիչների: Յուրաքանչյուր բաղադրիչի դիմաց նշված առավելագույն տոկոսը կարելի է հավաքել ծրագրային պահանջների շրջանակներում տվյալ կետի տակ ներկայացված պահանջները 100% -ով կատարելու դեպքում:</p>	
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:	

<p>Ներկայություն</p> <p>Գրավոր աշխատանքների ներկայացվող պահանջներ</p> <p>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</p>	
	<p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p>
	<p>Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:</p> <p>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

ՕՐ/ՇԱ ԲԱԹ	ԹԵՄԱ/ԺԱՄ	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌՍՁԱԴԻՄԱՆՔՆԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1-ին շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ / Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Հայոց լեզվի զարգացման շրջափուլերը:	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Ինտերակտիվ դասախոսություն • Բացատրում • Քննարկումներ <p>Նպատակը՝ ներկայացնել լեզվի դերը հասարակական կյանքում, ծագման վարկածները/աստվածաշնչյան և գիտական/: Լեզվի ծագման անհրաժեշտությունը և նրա տեղը աշխարհի լեզուների շարքում: Քննարկվող հարցերը՝ լեզուն մտածողության ձևավորման միջոց: Հայոց լեզուն հնդեվրոպական լեզու: Գրական լեզվի զարգացման երեք փուլերի նկարագիրը:</p>	<p>1. Համո Սահյանի «Մեր լեզուն» բանաստեղծությունը սովորել անգիր, կատարել դասողություններ յուրաքանչյուր քառատողի վերաբերյալ: 2. Սովորել թևավոր խոսքեր լեզվի մասին: 3. Ոստիկանին ներկայացվող ժամանակակից պահանջները. գրատախտակի ոմբակոծություն:</p>	<p>Մովորողը գիտի լեզվաընտանիքները և հայոց լեզվի տեղը այդ լեզուների շարքում: Կարողանում է ներկայացնել գրական լեզվի զարգացման երեք փուլերի նկարագիրը:</p>
2-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Հնչյունաբանություն	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Հակիրճ դասախոսություն • Քննարկումներ • Ինտերակտիվ հարցում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել հայերենի հնչյունական համակարգը, դասակարգել հնչյունները, ներկայացնել արբուբենի թվային արժեքը: Քննարկվող հարցեր՝ հնչյուն և տառ</p> <p>ա) հնչյունների դասակարգումը</p> <p>բ) բաղաձայն հնչյուններն ըստ ձայնի պարունակության</p>	<p>1. Բանավեճ՝ «Հայոց լեզու, դու մեր անկողնապտելի գանձը եղար» թեմայով: 2. Գործնական գրություն՝ ԶԵԿՈՒՑԱԳԻՐ</p>	<p>Մովորողը գիտի հնչյունի և տառի տարբերությունները, տարբերում է ձայնավոր և բաղաձայն հնչյունները, կարողանում է ըստ ձայնի պարունակության դասակարգել բաղաձայն հնչյունները:</p>

<p>3-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2ժամ</p> <p>Ուղղախոսություն, հնչյունափոխություն և շեշտ</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Քննարկումներ • Ինտերակտիվ հարցում • Բացատրում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել հայերենի ուղղախոսությունը՝ որպես խոսքի մշակույթի բաղկացուցիչ մաս: Իրազեկել, որ հայերենում շեշտն ունի իր կայուն տեղը: Բացատրել, որ բառերի հնչյունական կազմը լեզվի պատմական զարգացման ընթացքում կրում է փոփոխություններ, որով էլ զբաղվում է հնչյունափոխությունը:</p>	<p>Թեմայից բխող վարժություններ</p> <p>Հետաքրքիր է բաժնից՝ Հիշենք հացթուխին. կարդալ և քննարկել</p>	<p>Սովորողը գիտի՝ ինչ է հնչյունափոխությունը, կարողանում է բառերը հնչյունական փոփոխությունների ենթարկել պահպանելով ուղղագրական կանոնները:</p>
<p>4-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2ժամ/</p> <p>Բառապաշար. հնարանություններ, նորաբանություններ, օտարաբանություններ, փոխառություններ:</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում • Զրույցի մեթոդ <p>Նպատակը՝ սովորողներին տեղեկություն տալ բառապաշարի մասին, ներկայացնել բառապաշարի փոփոխությունները և հարստացման ուղիները:</p> <p>Քննարկվող հարցեր</p> <p>ա)ակտիվ և պասիվ բառապաշար, բ)փոխառություններ, գ)բառաշինություն/ բառապատճենում/, դ)հնարանություններ, ե)հնարանություններ և նորաբանություններ, զ)օտարաբանություններ:</p>	<p>Բանավեճի թեմա՝ Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես:</p> <p>Կազմել նորաբանությունների բառարան:</p> <p>Մտ. Մալխասյանի բացատրական բառարանից դուրս դրել հնարանություններ:</p>	<p>Սովորողը գիտի բառապաշարի սահմանումը, նրա հարստացման ուղիները և փոփոխությունները, կարողանում է տարբերել պատմաբառերը հնարանություններից, նորաբանությունները՝ օտարաբանություններից</p>
<p>5-րդ</p>	<p>Գործնական պարապմունք</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Ինտերակտիվ հարցում 	<p>Բառերը ենթարկել բառակազմական վերլուծության:</p>	<p>Սովորողը ճանաչում է պարզ և բաղադրյալ բառերը, գիտի բառի և տերմինի</p>

<p>շաբաթ</p>	<p>/2 ժամ</p> <p>Բառագիտություն</p> <p>Բառ և տերմին</p> <p>Բառակազմություն.</p> <p>բարդություններ:</p>	<ul style="list-style-type: none"> • Մտագրոհ • Բացատրում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել բառագիտություն երկու ենթաբաժինները՝ բառակազմություն և իմաստաբանություն: Բառ և տերմին հասկացություններ բառի բաղադրիչները, բառերի տեսակներն ըստ կազմության:</p> <p>Քննարկվող հարցեր</p> <p>ա)բառ և տերմին</p> <p>բ)արմատ և ածանց. տեսակները,</p> <p>գ)պարզ և բաղադրյալ բառեր,</p> <p>դ)բարդության տեսակները</p>	<p>Գործնական գրություն՝ Ինքնակենսագրություն</p>	<p>առանձնահատկությունները, կարողանում է բառերը ենթարկել բառակազմական վերլուծության:</p>
<p>6-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք</p> <p>/2 ժամ/</p> <p>Հապավական բարդություններ և համառոտագրութ.</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Ինտերակտիվ հարցում • Մտագրոհ • Բացատրում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել համառոտագրությունների և հապավումների առաջացման պատճառները, դրանց նշանակությունը և տարբերությունները, գրության ձևերը:</p> <p>Դասակարգել հապավումները.</p> <p>ա)տառային հապավումներ,</p> <p>բ)վանկային հապավումներ,</p> <p>գ)խառը հապավումներ,</p> <p>դ)նորաստեղծ հապավումներ:</p>	<p>1.Օգտվելով Դ. Գյուրջինյանի և Ն. Հեքեքյանի «Հայերենի տառային հապավումների բառարան-տեղեկատուից»՝ առանձնացնել իրավագիտության հետ առնչվող հապավումները:</p>	<p>Սովորողները ճանաչում են հապավումները և համառոտագրությունները, գիտեն նրանց առանձնահատկությունները, կարողանում են խոսքի մեջ ճիշտ գրել տառային հապավումները և ճիշտ համառոտել բառերը:</p>

<p>7-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Իմաստաբանություն բառերն ըստ իմաստի և ձևի</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Ակտիվ հարցում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել. ա)բառերի իմաստային փոփոխությունները.բառիմաստի նեղացում, բառիմաստի ընդլայնում և բառիմաստի շրջում, բ)բառերն ըստ իմաստի և ձևի. նույնանիշ, հոմանիշ, հականիշ, համանուն և հարանուն բառեր: գ)հարանունների ուղղագրությունը և կիրառությունը:</p>	<p>1.Բանավեճի թեմա՝ Ո՞վ էմ ես:</p> <p>2.Գալստյանի «Ճիշտը և սխալը» գրքից դուրս գրել հարանունները, տալ նրանց բացատրությունները և կիրառել նախադասությունների մեջ:</p> <p>3.Գրել շուտասելուկներ, բառախաղեր՝ստեղծված հարանուններով և համանուններով:</p>	<p>Սովորողները գիտեն , որ բառերը լինում են մենիմաստ և բազմիմաստ, ճանաչում են բառի փոխաբերական իմաստը, գիտեն իմաստափոխության տեսակները, կարողանում են խոսքի մեջ ճիշտ կիրառել համանունները և հարանունները:</p>
<p>8-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Ձևաբանական կարգերի ոճական հնարավորությունները: Գոյական անուն: Բաղադրյալ հատուկ անուններ:</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Քննարկումներ <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել գոյականի քերականական կարգերը: Սովորեցնել բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը: Քննարկվող հարցեր՝ Միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:</p>	<p>Գործնական գրություն՝ Դիմում Թեմայից բխող վարժություններ և թեստային աշխատանք</p>	<p>Սովորողները ճանաչում են հատուկ և հասարակ գոյականները, գիտեն սահմանումները: Խոսքի մեջ կարողանում են ճիշտ գրել բաղադրյալ հատուկ անունները:</p>
<p>9-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Գոյական անուն: Բաղադրյալ հատուկ անուններ:</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Քննարկումներ <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել գոյականի քերականական կարգերը: Սովորեցնել բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը: Քննարկվող հարցեր՝</p>	<p>Վարժություն՝ մարդու արտաքին և ներքին նկարագիրը... Թեմայից բխող վարժություններ</p>	<p>Սովորողները ճանաչում են հատուկ և հասարակ գոյականները, գիտեն սահմանումները: Խոսքի մեջ կարողանում են ճիշտ գրել բաղադրյալ հատուկ անունները:</p>

		Բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով:		
10-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Թվի քերականական կարգը: Գոյականի հոգնակի թվի կազմության յուրահատկությունն երը	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Քննարկումներ Նպատակը՝ սովորողներին ներկայացնել գոյականի թվի քերականական կարգը, գաղափար տալ անեզական և անհոգնական գոյականների և հավաքական գոյականների մասին: Քննարկվող հարցեր ա)անհոգնական գոյականներ, բ)անեզական գոյականներ, գ)բանաստեղծական հոգնակին՝ որպես լեզվի պատկերավորման յուրահատուկ միջոց:	Թեմայից բխող վարժություններ Կազմել տոնիմաձայն	Սովորողները ճանաչում են հոգնակիակերտ վերջավորությունները, գիտեն ածանցների և վերջավորությունների առանձնահատկությունները, կարողանում են տարբերել անհոգնական և անեզական գոյականները:
11-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Գոյականի հոգնակի թվի կազմությունը	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Քննարկումներ Նպատակը՝ սովորողներին ներկայացնել հոգնակի թվի կազմության եղանակները: Քննարկվող հարցեր ա)գոյականի հոգնակի թվի կազմությունը եր վերջավորությամբ, բ)գոյականի հոգնակի թվի կազմությունը ներ վերջավորությամբ: գ)զուգաձևությունները թվի քերականական կարգում:	Թեմայից բխող վարժություններ	Սովորողները գիտեն հոգնակի թվի կազմության կանոնները, կարողանում են ճիշտ կառուցել գոյականների հոգնակի ձևերը:

<p>12-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Ածական անուն</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել ածականը՝ որպես առարկայի հատկանիշ ցույց տվող բառ, խոսել որակական և հարաբերական ածականներից, թվարկել որակական ածականների առանձնահատկությունները: Բացատրել ածականների կիրառությունը և ուղղագրությունը:</p> <p>Քննարկվող հարցեր Ձևաբանական-ածականական նորմ. Շեղումներ և զուգաձևություններ:</p>	<p>Գրել կայուն բառակապակցություններ, որոնց բաղադրիչներից մեկը որակական կամ հարաբերական ածական է:</p> <p>Գրել ոստիկանին բնութագրող բառեր և բառակապակցություններ:</p> <p>Գործնական գրություն՝ Բնութագիր</p>	<p>Սովորողներին ճանաչում են ածականը՝ որպես նյութական իմաստ ունեցող խոսքի մաս, գիտեն նրա կիրառությունը խոսքի մեջ: Կարողանում են տալ որակական և հարաբերական ածականների սահմանումները, թվարկել որակական ածականների առանձնահատկությունները</p>
<p>13-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Թվական անուն</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ ներկայացնել թվականը՝ որպես առարկայի քանակական հատկանիշ ցույց տվող բառ: Բացատրել թվականների կազմությունը և ուղղագրությունը:</p> <p>Քննարկվող հարցեր՝</p> <p>Դասակարգել թվականները. ա)բացարձակ, բ)բաշխական, գ)կոտորակային, դ)դասական:</p>	<p>Գրել կայուն բառակապակցություններ, որոնց բաղադրիչներից մեկը թվական է:</p> <p>Մարդու արտաքին նկարագիրը: Առավել անհատականացնող գծեր</p> <p>Ժողովրդական ասացվածքներ թվականներով</p>	<p>Սովորողները ճանաչում են թվականը որպես խոսքի մաս, գիտեն նրանք քերականական առանձնահատկությունները, կարողանում են խոսքի մեջ ճիշտ գրել թվականները:</p>

<p>14-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Թվականի կազմությունը և ուղղադրությունը</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել թվականների կազմությունը՝ պարզ, ածանցավոր, բարդ: Քննարկվող հարցեր</p> <p>ա)պարզ, բարդ, ածանցավոր թվականներ</p> <p>բ)թվականակերտ ածանցներ</p> <p>գ)բարդ թվականների տեսակները՝ հարադրավոր, կրկնակցական,</p> <p>դ)ձևաբանական-թվականական նորմ. շեղումներ և գուգաձևություններ:</p>	<p>Թեմայից բխող վարժություններ</p>	<p>Սովորողները ճանաչում են թվականների 4 տեսակները, գիտեն թվականների կազմությունը և կարողանում են խոսքի մեջ ճիշտ գրել թվականները:</p>
<p>15-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Դերանուն. տեսակները:</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ ներկայացնել դերանունների առանձնահատկությունները, դասակարգել ըստ իմաստի և ըստ քերականական առանձնահատկությունների: Քննարկվող հարցեր.</p> <p>ա)ես//ինքս, ես ինքս, դու//ինքդ, դու ինքդ, նա//ինքը, նա ինքը շարքերի միջև եղած իմաստային և լեզվա-ոճական տարբերությունները:</p>	<p>Թեմայից բխող վարժություններ</p> <p>Անգիր սովորել Պարույր Սևակի «Դու» ստեղծագործությունը:</p> <p>Լսարանային խաղ՝ Իմ գաղտնի ընկերը</p>	<p>Սովորողը ճանաչում է դերանունները, նրա խոսքիմասային առանձնահատկությունները: Գիտի դերանվան սահմանումը: Կարողանում է դասակարգել դերանունները՝ ըստ իմաստի և քերականական առանձնահատկությունների:</p>

		բ) նույնպես բառի կիրառությունը թե՛ որպես դերանուն, թե՛ որպես վերաբերական: գ) ինչո՞ւ և ինչի՞ հարցադրումների ճիշտ գործածությունը		
16-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Դերանունների հոլովումը	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում • Քննարկում Նպատակը՝ ներկայացնել դերանունների հոլովման առանձնահատկությունները: Քննարկվող հարցեր ա) անվանական և դերանվանական հոլովումներ, բ) ձևաբանական-դերանվանական նորմ. շեղումներ և գուգաձևություններ:	Հոլովել դերանվանական հոլովման պատկանող դերանուններ	Մովորողը գիտի՝ ինչ է հոլովումը, կարողանում է հոլովել դերանունները և տարբերում է անվանական և դերանվանական հոլովումները:
17-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Բայ: Դերբայական ձևեր	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում • Քննարկում Նպատակը՝ սովորողներին ներկայացնել բայը՝ քերականական յուրահատուկ կարգերով, դրսևորման երկու ձևերով՝ դիմավոր և անդեմ: Քննարկվող հարցեր. Դերբայներ ա) անկախ դերբայներ, բ) կախյալ դերբայներ կամ ձևաբայեր:	Թեմայից բխող վարժություններ Գործնական գրություն՝ Տեղեկանք	Մովորողները ճանաչում են բայի դիմավոր և անդեմ ձևերը, գիտեն դրանց սահմանումները և առանձնահատկությունները: Կարողանում են առանձնացնել անկախ դերբայներն ու ձևաբայերը և կիրառել խոսքի մեջ:

<p>18-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Բայի դիմավոր ձևեր: Բայի եղանակները</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում • Մտազրոհ <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել դիմավոր բայերին բնորոշ քերականական հատկանիշները: Բացատրել բայի եղանակները, կազմության ձևերը:</p> <p>Քննարկվող հարցեր.</p> <p>ա)բային բնորոշ թեքումը՝ խոնարհում, բ)դրական և ժխտական խոնարհում:</p>	<p>Խոնարհել տրված բայերը սահմանական եղանակի յոթ ժամանակաձևերով:</p> <p>Պոեզիայից մեջբերել ըղձական եղանակի բայեր ունեցող քառատողեր:</p>	<p>Մովորողները գիտեն դիմավոր բայերին բնորոշ քերականական կարգերը, ճանաչում են բայի պարզ և բաղադրյալ ձևերը:Կարողանում են խոնարհել բայերը բոլոր եղանակներով:</p>
<p>19-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Անկանոն և պակասավոր բայեր</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել անկանոն և պակասավոր բայերը, զուգաձևություններն անկանոն բայերի մանրահամակարգում:</p> <p>Քննարկվող հարցեր</p> <p>ա)նույնարմատ անկանոն բայեր, բ)այլարմատ անկանոն բայեր, գ)տարարմատ անկանոն բայեր:</p>	<p>Վարժություններ</p> <p>Վարժ.</p> <p>Իմ«ես»-ի քարտեզը</p>	<p>Մովորողը ճանաչում է մոտ 20 անկանոն բայերը, գիտի խոնարհել և խոսքի մեջ ճիշտ գործածել:</p>

<p>20-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Մակբայ. կիրառությունը</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Ակտիվ բանավեճ • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ ներկայացնել , որ մակբայները մի կողմից հարում են նյութական իմաստ ունեցող խոսքի մասերին, իսկ մյուս կողմից՝ նյութական իմաստից զուրկ չթեքվող խոսքի մասերին՝ կապին, շաղկապին, ձայնարկությանը վերաբերականին:</p> <p>Քննարկվող հարցեր.</p> <p>ա)մակբայների տեսակները՝ տեղի, ժամանակի, ձևի և չափ ու քանակի, բ)ընդհանրական մակբայներ, գ)մակբայների կիրառությունը:</p>	<p>Նախադասության վերլուծություն ձևաբանորեն</p>	<p>Մովորողները գիտեն մակբայի առանձնահատկությունները, կազմությունը և տեսակները:Կարողանում են խոսքի մեջ ճիշտ գործածել մակբայները և որոշել նրանց շարահյուսական պաշտոնները:</p>
<p>21-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Կապ.գործածության յուրահատկություն- ները:</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել կապը՝ որպես նյութական իմաստից զուրկ խոսքի մաս:Իմաստային առումով կապերը դասակարգել և խոսել նրանց տեսակների և առանձնահատկությունների մասին:</p> <p>Քննարկվող հարցեր.</p> <p>ա)իսկական կապեր,</p>	<p>Վարժություն Ճիշտ և սխալ</p> <p>Հիմնավորել ընտրությունը. առանց ծաղիկ-առանց ծաղկի հանձին նրանց-հանձինս նրանց առանց խոսել- առանց խոսելու ըստ ինձ-ըստ իս քո պես- քեզ պես իմ նման-ինձ նման բացի նա- բացի նրանից իբեն համար-իբ համար</p>	<p>Մովորողները ճանաչում են կապերը, գիտեն կապի սահմանումը և տեսակները: Կարողանում են կիրառել խոսքի մեջ և որոշել կապի և կապի խնդրի պաշտոնը:</p>

		<p>բ)անիսկական կապեր, գ)կապական բառեր, դ)կապերի խնդրառությունը:</p>		
22-րդ	<p>Գործնական</p> <p><i>/2 ժամ/</i></p> <p>Շաղկապ.կիրառու- թյունը</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին գաղափար տալ շաղկապների, նրանց քերականական առանձնահատկությունների մասին:</p> <p>Քննարկվող հարցեր.</p> <p>Շաղկապների տեսակները և կրառությունը խոսքի մեջ:</p>	<p>Վարժություններ Գործնական գրություն՝ առարկայի զննություն</p>	<p>Սովորողները տարբերում են համադասական և ստորադասական շաղկապները, գիտեն շաղկապների իմաստային առանձնահատկությունները, կարողանում են ճիշտ կետադրել տեքստը:</p>

<p>2-րդ կիսամյակ</p> <p>1-ին շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Շարահյուսություն. նախադասության տեսակներն ըստ կազմության</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել նախադասությունը՝ որպես շարահյուսական միավոր: Խոսել նախադասության կարևոր հատկանիշների մասին:</p> <p>Քննարկվող հարցեր.</p> <p>Նախադասություններն ըստ կազմության. պարզ և բարդ նախադասություններ: Պարզ նախադասության տեսակները՝ պարզ համառոտ և պարզ ընդարձակ:</p>	<p>Վարժություններ</p> <p>Գործնական գրություն՝ Բացատրություն</p>	<p>Սովորողները գիտեն նախադասության սահմանումը, տարբերում են պարզ և բարդ նախադասությունները: Կարողանում են որոշել նախադասության բնույթը, պարզ համառոտ նախադասությունները կարողանում են դարձնել պարզ ընդարձակ:</p>
<p>2-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Բարդ նախադասության տեսակները. բարդ համադասական և բարդ ստորադասական</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին գաղափար տալ բարդ նախադասությունների մասին: Դասակարգել բարդ նախադասություններն ըստ կազմության: Ներկայացնել բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունները:</p>	<p>Վարժություններ</p> <p>Անգիր սովորել Պարույր Սևակի «Օսվել եմ» ստեղծագործությունը</p>	<p>Սովորողները տարբերում են պարզ և բարդ նախադասությունները, գիտեն բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների առանձնահատկությունները, կարողանում են ինքնուրույն կազմել բարդ կառույցի նախադասություններ և կետադրել:</p>
<p>3-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Երկրորդական նախադասության</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորեցնել որոշել երկրորդական նախադասության բնույթը, դիրքը և կետադրել ճիշտ:</p> <p>Քննարկվող հարցեր.</p>	<p>Թեմայից բխող վարժություններ</p> <p>Գործնական գրություն՝ Արձանագրություն հաղորդում ընդունելու մասին</p>	<p>Սովորողները գիտեն երկրորդական նախադասությունների շարահյուսությունը, կապակցման միջոցները, տարբերում են</p>

	<p>դիրքը և կետադրությունը</p>	<p>ա) գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցման միջոցները, բ) բարդ ստորադասական նախադասության հնչերանգը և կետադրությունը, գ) երկրորդական նախադասության շարադասությունը, դ) երկրորդական նախադասությունների տեսակները:</p>	<p>Վարժություններ</p>	<p>երկրորդական նախադասությունների բնույթը, կարողանում են ճիշտ կետադրել:</p>
<p>4-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Նախադասության գլխավոր անդամներ. ենթակա և ստորոգյալ</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ ներկայացնել նախադասության գլխավոր անդամները՝ ենթակա և ստորոգյալ: Խոսել ենթակայի արտահայտության և ստորոգյալի կազմության մասին: Գաղափար տալ պարզ և բաղադրյալ ստորոգյալների մասին:</p> <p>Քննարկվող հարցեր.</p> <p>ա) ենթակայի արտահայտությունը, բ) ստորոգյալի արտահայտությունը և տեսակները. պարզ բաղադրյալ, գ) ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը:</p>	<p>Վարժություններ</p>	<p>Սովորողները գիտեն նախադասության կառուցվածքը, ճանաչում են ենթական և ստորոգյալ, գիտեն նրանց սահմանումները: Կարողանում են տարբերել պարզ և բաղադրյալ ստորոգյալները: Խոսքի մեջ ճիշտ են համաձայնեցնում ենթական և ստորոգյալը:</p>

<p>5-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Նախադասության երկրորդական ան- դամներ. Գոյականա- կան անդամի լրացումներ. որոշիչ</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել նախադասու- յան երկրորդական անդամները՝ լրացումները: Հատկա- պես առանձնացնել որոշիչը՝ որպես գոյականական անդամի լրացում: Որոշիչի և որոշյալի շարադասությունը Քննարկվող հարցեր. գոյականական անդամի լրացումներ. ա) որոշիչի արտահայտությունը, բ) որոշիչի դիրքը և կետադրությունը. հետադաս որոշիչներ կամ հետադաս որոշիչ բառակապակցություն:</p>	<p>Թեմայից բխող վարժություններ</p>	<p>Սովորողները ճանաչում են գոյականական անդամի լրացումները: Գիտեն որոշիչի սահմանումը և արտահայտության ձևերը, կարողանում են խոսքի մեջ ճիշտ կետադրել բազմակի հետադաս որոշիչները և հետադաս որոշիչ բառակապակցությունը:</p>
<p>6-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Գոյականական անդամի լրացում. հատկացուցիչ</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Բննարկում • Ինտերակտիվ գրույց <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել հատկացու- ցիչը՝ որպես գոյականական անդամի լրացում, խոսել նրա արտահայտության մասին; Հատկապես ներկայաց- նել հատկացուցչի և հատկացյալի շարադասությունը և դրա հետ կապված կետադրությունը:</p>	<p>Գործնական գրություն՝ ՆԱՄԱԿ</p>	<p>Սովորողը ճանաչում է հատկացուցիչը, կարողանում է խոսքի մեջ ճիշտ կետադրել հեռացած հատկացուցիչը:</p>
<p>7-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Գոյականական անդամի լրացում. բուն բացահայտիչ</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում • Ինտերակտիվ գրույց <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել բացահայտիչը՝ որպես գոյականական անդամի լրացում: Առանձնացնել բացահայտիչի երեք տեսակները՝ բուն բացահայտիչ,</p>	<p>Թեմայից բխող վարժություններ Թելադրություն</p>	<p>Սովորողը ճանաչում է բուն շացահայտիչը, գիտի բացահայտիչի արտահայտությունը, բացահայտիչի և բացահայտյալի շարադասությունն ու</p>

		մասնական բացահայտիչ և մասնավորող պարագայական բացահայտիչ: Խոսել բուն բացահայտիչ շարադասության և համաձայնության մասին:		համաձայնությունը, կարողանում է ճիշտ կետադրել բուն բացահայտիչը:
8-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Գոյականական անդամի լրացում. մասնական բացահայտիչ	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում • Ինտերակտիվ զրույց Նպատակը՝ ներկայացնել մասնական բացահայտիչի առանձնահատկությունները, ձևավորման ձևերը, համաձայնությունը և կետադրությունը:	Թեմայից բխող վարժություններ	Մովորողը ճանաչում է մասնական բացահայտիչը, գիտի մասնական բացահայտիչի ձևավորման եղանակները: Կարողանում է խոսքի մեջ ճիշտ կետադրել այն:
9-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Գոյականական անդամի լրացում. մասնավորող պարագայական բացահայտիչ	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում • Ինտերակտիվ զրույց Նպատակը՝ սովորողներին ներկայացնել տեղի և ժամանակի մասնավորող պարագայական բացահայտիչները և տրոհումը բանավոր ու գրավոր խոսքում:	Թեմայից բխող վարժություններ թելադրություն Իմ« ես»-ի քարտեզը	Մովորողը ճանաչում է մասնավորող պարագայական բացահայտիչները, գիտի նրանք կետադրելու կանոնները, կարողանում է ինքնուրույն կազմել նախադասություններ և կետադրել:
10-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Բայական անդամի լրացումներ. խնդիրներ	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Մտազրույց • Քննարկում Նպատակը՝ սովորողներին գաղափար տալ բայական անդի լրացումների՝ խնդիրների և պարագաների մասին: Ներկայացնել խնդիրները՝ ուղիղ և անուղղակի: Քննարկվող հարցեր. ա) ուղիղ խնդրի հոլովները. ուղղականաձև հայցական և	Թեմայից բխող վարժություններ Գրել շարադրություն	Մովորողները ճանաչում են բայական անդամի լրացումները, կարողանում են որոշել խնդիրների տեսակները և նրանց հոլովները:

		տրականաձև հայցական, բ)անուղղակի խնդիրների տեսակները. հանգման խնդիր, միջոցի խնդիր, վերաբերության խնդիր, անջատման խնդիր, ներգործող խնդիր...		
11-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Պարագաներ	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում Նպատակը՝ սովորողներին գաղափար տալ պարագանե րի, նրանց տեսակների և կիրառության մասին: Ներկայացնել, թե այս կամ այն պարագան ինչ խոսքի մասերով է արտահայտվում, որ հոլովներով է դրվում և ինչ հարցերի է պատասխանում:	Գրել փոխադրություն	Սովորողները գիտեն պարագաների տեսակները, նրանց արտահայտությունը, կարողանում են որոշել նրանց պաշտոնը նախադասության մեջ:
12-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Ղերբայական դարձված	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Ինտերակտիվ զրույց • Քննարկում • Բացատրում Նպատակը՝ սովորողներին գաղափար տալ ղերբա- յական դարձվածի, հատկապես տրոհվող ղերբայական դարձվածների մասին: Քննարկվող հարցեր. ա)անկախ ղերբայներ, որոնցով ձևավորվում են ղերբա- յական դարձվածներ, բ)տրոհվող ղերբայական դարձվածի դիրքը՝ նախադաս, միջադաս, վերջադաս:	Թեմայից բխող վարժություններ Թելադրություն Անգիր սովորել Պարույր Սևակի « Մի պահ զղում եմ» ստեղծագործությունը	Սովորողները ճանաչում են անկախ և կախյալ ղերբայները, գիտեն, որ ղերբայական դարձված ձևավորվում է անկախ ղերբայներով: Կարողանում են խոսքի մեջ որոշել տրոհվող ղերբայական դարձվածի դիրքը:

<p>13-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարասպմունք /2 ժամ/ Տրոհվող դերբայական դարձվածի կետադրությունը</p>	<p>Տեսակը՝ գործնական պարասպմունք</p> <ul style="list-style-type: none"> • Քննարկում • Բացատրում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել տրոհվող դերբայական դարձվածի դիրքը և կետադրությունը: Քննարկվող հարցեր. ա)նպատակի պարագա դերբայական դարձվածի կետադրությունը, բ)առանց և փոխանակ կապերով ձևավորված տրոհվող դերբայական դարձված:</p>	<p>Թեմայից բխող վարժություններ</p>	<p>Սովորողները կարողանում են դերբայական դարձվածներով ինքնուրույն կազմել նախադասություններ և կետադրել:</p>
<p>14-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարասպմունք /2 ժամ/ Դերբայական դարձվածը բարդ նախադասության կազմում</p>	<p>Տեսակը՝ գործնական պարասպմունք</p> <ul style="list-style-type: none"> • Քննարկում • Բացատրում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել տրոհվող դերբայական դարձվածը բարդ նախադասության մեջ, սովորեցնել ճիշտ կետադրել դերբայական դարձվածը շաղկապից առաջ և հետո: Քննարկվող հարցեր. Զուգաձևություններ և տարակարծություններ</p>	<p>Գործնական գրություն՝ Պաշտոնական նամակ</p>	<p>Սովորողները կարողանում են դերբայական դարձվածներով ինքնուրույն կազմել նախադասություններ և կետադրել:</p>
<p>15-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարասպմունք /2 ժամ/ Կոչական կետադրու թյունը</p>	<p>Տեսակը՝ գործնական պարասպմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին գաղափար տալ կոչականի մասին որպես նախադասության անդամ չհանդիսացող բառի:Բացատրել, որ կոչականը ոչ միայն անձ կարող է ցույց տալ, այլև առարկա, իր, երևույթ: Կոչականի դերով կարող է հանդես գալ անգամ հատկանիշ</p>	<p>Թեմայից բխող վարժություններ</p>	<p>Սովորողները ճանաչում են կոչականը, գիտեն նրա սահմանումը, անձ, իր և երևույթ ցույց տալը, կարողանում են կոչականով ինքնուրույն կազմել նախադասություններ և կետադրել:</p>

		արտահայտող բառեր: Յուրահատուկ ուշադրություն սևեռել կոչականի դիրքին և կետադրությանը:		
16-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Ուրիշի խոսք	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել ուրիշի խոսքի տեսակները՝ ուղղակի և անուղղակի: Սովորեցնել տարբերել ուղղակի և անուղղակի խոսքերը:</p> <p>Քննարկվող հարցեր.</p> <p>ա)պատմողաբար մեջբերվող խոսք. կետադրությունը, բ)ուղղակի խոսքի վերածումն անուղղակի խոսքի, գ)փոխակերպման հետ կապված փոփոխությունները:</p>	Թեմայից բխող վարժություններ, փոխակերպումներ Թելադրություն	Սովորողները ճանաչում են մեջբերվող խոսքով նախադասությունները, գիտեն ուրիշի խոսքի տեսակները, կարողանում են ուղղակի խոսքը վերածել անուղղակի խոսքի և ճիշտ կետադրել:
17-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Ուրիշի ուղղակի խոսքի տեսակները. ասացական և ներքին կամ մտածական	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել մեջբերվող խոսքի տեսակները, ներկայացնել նրանց առանձնահատկությունները, սովորեցնել կազմել համապատասխան նախադասություններ:</p> <p>Քննարկվող հարցեր.</p> <p>ա)նույնությամբ մեջբերվող խոսք, բ)ասացական խոսքի առանձնահատկությունները, գ)մտածական խոսքի առանձնահատկությունները, դ)Ուրիշի կարճ խոսք:</p>	Վարժություններ Գրել հարցազրույց/ Անչափահաս մուրացկանը/	Սովորողները ճանաչում են ուղղակի խոսքի տեսակները, Գիտեն ուրիշի կարճ խոսքի հետ կապված կետադրությունը և կարողանում են անսխալ կետադրել:

<p>18-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Ուրիշի ասացական խոսք. հեղինակի խոսքի դիրքը և կետադրությունը</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել, որ ուրիշի ասացական խոսքը հեղինակայինի համեմատությամբ կարող է լինել հետադաս, նախադաս և կարող է բաժանվել երկու մասի, որոնց մեջ գրվում է հեղինակի խոսքը:</p>	<p>Վարժություններ</p>	<p>Սովորողը ճանաչում է ասացական խոսքը և հեղինակի խոսքը, գիտի, որ այն հեղինակի խոսքի համեմատ ունի երեք դիրք, կարողանում է երկխոսությունը ճիշտ կետադրել:</p>
<p>19-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Ուրիշի ներքին կամ մտածական խոսք. հեղինակի խոսքի դիրքը և կետադրությունը</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Բացատրում • Քննարկում <p>Նպատակը՝ սովորողներին ներկայացնել ներքին կամ մտածական խոսքը, բացատրել, որ հեղինակի խոսքը մտածական խոսքի համեմատությամբ կարող է լինել նախադաս, վերջադաս և այն կարող է բաժանվել երկու մասի:</p>	<p>Վարժություններ Փոխադրություն</p>	<p>Սովորողները ճանաչում են ներքին կամ մտածական խոսքը, գիտեն նրա երեք դիրքերը, կարողանում է ճիշտ կետադրել:</p>

<p>20-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Կետադրություն</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Քննարկում <p>Նպատակը՝ Սովորողներին ներկայացնել կետադրության նշանները, նրանց երեք տեսակները՝ տրոհության, առոգանության, բացահայտության, խոսել կետադրական նշանների անհրաժեշտության ու նշանակության մասին: Սովորեցնել ճիշտ կետադրել տեքստերը: Քննարկվող հարցեր.</p> <p>Տրոհության նշաններ. ա)վերջակետ, բ)միջակետ, գ)ստորակետ, դ)բութ: Առոգանության նշաններ. ա)շեշտ, բ)հարցական նշան, գ)բացականչական նշան:</p>	<p>Վարժություններ</p>	<p>Սովորողները ճանաչում են կետադրական նշանները, գիտեն յուրաքանչյուրի գործածության ոլորտը, դերը և նշանակությունը, կարողանում են տեքստը ճիշտ կետադրել:</p>
<p>21-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Կետադրություն</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Քննարկում <p>Նպատակը՝ Սովորողներին սովորեցնել գրավոր խոսքի մեջ ճիշտ կիրառել բացահայտության նշանները: Քննարկվող հարցեր.</p> <p>ա)փակագծեր, բ)չակերտներ, գ)միության գծիկ,</p>		<p>Սովորողները ճանաչում են կետադրական նշանները, գիտեն յուրաքանչյուրի գործածության ոլորտը, դերը և նշանակությունը, կարողանում են տեքստը ճիշտ կետադրել:</p>

		դ)անջատման գիծ, ե)բազմակետեր և կախման կետեր:		
22-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Ոճաբանություն: Ոճերի տեսակները	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Քննարկում Նպատակը՝ սովորողներին գաղափար տալ ոճի և նրա տեսակների մասին: Ներկայացնել անհատական, իրադրական և գործառական ոճերը: Քննարկվող հարցեր. գործառական ոճեր/առօրյա-խոսակցական, գեղարվեստական, գիտական, հրապարախոսական, վարչագործարարական/, նրանց առանձնահատկությունները, լեզվական նյութը, ժանրերը:	Գեղարվեստորեն նկարագրել որևէ տեղանք՝ օգտագործելով լեզվի պատկերավորման միջոցներ՝ համեմատություններ, փոխաբերություններ, մակդիրներ:	Սովորողները գիտեն, որ ոճաբանությունը հայոց լեզվի գիտաբաժին է, որը սովորեցնում է հիմնականում գեղեցիկ և ներգործուն խոսք կառուցել: Կարողանում են զանազանել գործառական ոճի տեսակները:
23-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ Վարչագործարարական ոճ	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Պասիվ դասախոսություն • Քննարկում Նպատակը՝ սովորողներին ներկայացնել վարչագործարարական ոճի առանձնահատկությունները, ժանրերը, դրանց ներկայացվող պահանջները: Քննարկվող հարցեր: Վարչարարական խոսքի տարատեսակները. ա)գրասենյակային- գործարարական, բ)վարչական-դիվանագիտական, գ)վարչական-իրավաբանական:	Տեղանքի նկարագրություն	Սովորողները ճանաչում են պաշտոնական խոսքը, գիտեն նրա առանձնահատկությունները և տարատեսակները, կարողանում են ճիշտ գրել գործնական գրությունները:

24-րդ շաբաթ	Գործնական պարապմունք պարապմունք /2 ժամ/	Տեսակը՝ գործնական պարապմունք Ստուգողական թելադրություն Նպատակը՝ ստուգել սովորողների ուստարվա ընթաց քում ձեռք բերած գիտելիքները ուղղագրությունից և կետադրությունից:		Սովորողները կարողանում են գրել ստուգողական թելադրություն՝ պահպանելով ուղղագրական և կետադրական բոլոր կանոնները:

Շ Ա Ղ Կ Ա Պ Ն Ե Ր Ն Ը Ս Տ Ի Մ Ա Ս Տ Ի

Միավորիչ շաղկապներ	և, ու, էլ, նաև, այլև, թե...թե, ոչ...ոչ, ոչ միայն...այլև
Ներհակական շաղկապ.	Իսկ, քայց, սակայն, մինչդեռ, այնինչ, ոչ թե, թե չէ, միայն թե ...
Տրոհական շաղկապներ	կամ, և կամ, կամ թե, կամ թե չէ....
Բացահայտման շաղկապներ	այսինքն, այն է
Մեկնական շաղկապներ	որ, թե ...
Նպատակային շաղկապներ	որպեսզի, որ :
Պայմանի շաղկապներ	եթե, թե, թե որ, միայն, միայն թե, եթե միայն և այլն
Պատճառի շաղկապներ	որովհետև, որ, քանի որ, մանավանդ որ, նամանավանդ որ...
Ժամանակային շաղկապ	երբ, երբ որ, մինչև, մինչև որ, մինչ, հենց, հենց որ, քանի, քանի դեռ, որ, թե չէ...
Հետևանքի շաղկապներ	հետևաբար, հետևապես, ուստի, ուրեմն...
Զիջական շաղկապներ	թեև, թեկուզ, թեկուզ և, թեպետ, թեպետ և, չնայած, չնայած որ...
Ձևի և նմանության շաղ.	Ինչպես, ինչպես, որ, ոնց որ, ասես, կարծես, կարծես թե...

ՈՒՐԻՇ ՈՒՐՍ ԿԱՐԵԼԻ Է ԿՈՉԵԼ
ԱՍՏՎԱԾ ԿԱՍ ՄԱՐԴ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ,
ԵԹԵ ՈՉ ՆՐԱՆ, ՈՎ ԱՌԱՋԻՆԸ ԳԻՐ
ԳՏԱՎ:

ՊԼԱՏԱՆ

